

Մօսկ. Եֆդ. և ուրիշ Ռուսաց թերթեր ոգեսըռութեամբ ողջունելով Ս. Սինոդի այս որոշումը՝ նկատում են այն իրեւ մի նոր ակներեւ ապացոյց, թէ որչափ զօրեղ է հաւատը ուուս ժողովուրդի մէջ և որչափ մեծ է Աստուծոյ ողօրմութիւնը գէպի նա, որ կասկածի և անհաւատութեան այս ծանր ժամանակներում սուրբ Սեբաֆիմ Սարովացու նման մեծ լուսաւորեներ և վկաներ է յարուցանում:

ԿԸԹՈԼԻԿԻ ԵԿԵՂԵՑԻ

Կարդինալների ժողովը բաղկացած է ներկայումս 59 անդամից, որով 11 անդամ պակասում են ամքողջի թիւը լրացնելու համար: Պիոս Ֆ. պապից կարդինալութիւն ստացած միայն երկու հոգի են մնում. Լեռն ԺՊ-ի անուանաձներից ամենահինն է Վիսաքոնի պատրիարք կարդինալ Նետաօն, որ այդ կոչումն ստացաւ 1884 թ.-ին: Վերջին անդամ կարդինալութիւն ստացել են 10 հոգի, երկու տարի առաջ: Ամէնից ծեր կարդինալն 1814 թ. յունուար 13-ին ծնուած Պալերմոյի արքեպիսկոպոս Գելեզիան է. ամէնից երիտասարդը Պրագի Եշխան-արքեպիսկոպոս Սկրբենոկին, որ հաղիւ 40 տարեկան է: Հստ ազգութեան 59 կարդինալներից 36 իտալացի են, 23 ուրիշ երկրներից. 28 հոգի, որոնցից 3-ը օտար երկրացի՝ նստում են Հռոմում: Լեռն ԺՊ-ի քահանայապետութեան օրով 144 կարդինալներ են վախճանուել՝ 7 հոգի միայն վերջին 1902 թ.-ին:

— Աւստրիոյ կայորը մի հաղորդագրութիւն է մատուցել պապին, որով ինքը ում է երանելեաց դասը դնել (սըրացման առաջին աստեճան) Աւստրիոյ մեծ դքսուհի Մագիստրինէին: Այդ թուղթը, որին ստորագրել են Աւստրիոյ ըոլոր չափահաս մեծ դուքսերն ու դքսուհիները՝ յանձնուած է «Ծէսերի յանձնաժողովին» ի քննութիւն:

— Զուիցերիսն նոյնպէս, որ Ֆրանոիայից արտաքսուած կը օնաւորական կարդերի մի կարեռ ապաստանարանն էր, նոցադէմ է ելնում այժմ: Դաշնակցութեան բարձր խորհուրդը որոշել է, որ իւր կանտոններն ապաստանած տասը զանազան՝ մեծ մասամբ կանանց, կարդեր և ընկերութիւններ 90 օրուայ ժամանակամիջոցում հեռանան այս երկրից:

— Լուրերին նայելով, անգլիացի նշանաւոր վիպասան Չարլզ Կինգոլիի մի դուստրը, Տիկին Հարրիսոն, որ իրեւ հեղինակ յայտնի է «Լուկաս Մալէտ» ծածկանուան ներքոյ, պատրաստուում է կաթոլիկութիւն ընդունելու:

— Գերմանիոյ Պետական խորհրդի մէջ մի քանի տարին մի անդամ կաթոլիկ կուսակցութիւնը միշտ նոր եռանդով հարց է՝ զարթեցնում՝ վերացնելու 1872 թ.-ի այն օրէնքը, որով եղուիտների մուտքն այս երկիրը արգելուած է, և իւրաքանչիւր անգամ ահագին աղմուկ է բարձրանում, ժողովները հեղեղում են խորհրդարանը, մինչև որ վրդովեցուցիչ առաջարկը մերժուում է ձայների մեծամասնութեամբ։ Պետական կանցկացի այս յունուար 21-ին հրատարակած մի յայտագրից երեսում է սակայն, որ գերմանական կառավարութիւնը՝ կաթոլիկ տարրին գրաւելու համար մերջին տարբներն արած բազմաթիւ զիջումներից յետոյ, որոշել է այս քայլն ևս անել և վճռական միջոցների դիմել հակաեղուիտական օրէնքը վերացնելու համար։ «Աւետարանական Միութիւնը», որ այսպիսի գեղքերում միշտ առաջին բողոքողներից է եղել՝ այժմ ևս իւր ձայնը բարձրացնելով եղած որոշման դէմ, յայտարարում է և միջի այլոց։ «Բարձրածայն և որոշ կերպով կրկնում ենք մենք դերմանական ժողովրդի առաջ, որ ծրագրուած կարդագրութեան մէջ ծանը վտանգ ենք տեսնում մեր ժողովրդի՝ նորա ներքին խաղաղութեան, նորա հոգեոր և քարոյական հարստութեան պահպանութեան համար։ Յիսուսնեան կարգի Գերմանիայում և արտաքոյ Գերմանիայի ցայսօր ունեցած պատմութիւնը մի խիստ խրատական աղբարարութիւն է։ Մոռացել ենք երեսնամեայ պատերազմները։ Մեր երկիրը մեր Աւետարանական եկեղեցւոյ համար չէ։ Նա յաւիտենական հիմքի վերայ է հաստատուած և բացարձակ թշնամու դէմ կոռուելով աւելի ևս զօրանալ կարող է։ Հայրենիքի համար է մեր հոգսը, ընտանիքների և համայնքների խաղաղութեան, պետական կեանքի կանոնաւոր զարդացման, այո՛, վերջապէս նաև գերմանական միութեան ու զօրութեան համար»։

Chr. Welt-ի խմբագիրն այդ յայտարարութիւնը ապելով իւր կողմից ևս աւելացնում է, որ եղուիտների հանդէս զալը կնպաստէ միայն «բողոքականութեան ինքնագիտակցութիւնը» զօրացնելու և գլխացաւանք կպատճառէ ամէնից աւելի հէնց իրեն կաթոլիկ եկեղեցուն։ Նա նայում է այդ խնդրի վերայ գլխաւորապէս իրեկ յայտարար նշանի, թէ ինչ տրամադրութիւն է տիրում և ինչ հոսանքներ գերիշխող են կառավարչական շրջաններում։ Ապա թէ ո՞չ, շատ աւելի վտանգաւոր և ուշադրութեան արժանի շարժում համարում է նա մի քանի կաթոլիկական շրջաններում միաժամանակ բուռն եռանդով արտայայտուած այն ցանկութիւնը, թէ ոկտր է իւրաքանչիւր

դաւանութեան պատկանողների համար առանձին դպրոցներ ունենալ: Եթօք ստորին կարդի դպրոցներում մեծ մասամբ այդ պահանջն ինքն ըստ ինքեան կատարուում է՝ կաթոլիկներն ու բողոքականներն առանձին առանձին դպրոցներ են յաճախում: Ենդեռը միջնակարդ և բարձրագոյն հաստատութիւնների մասին է, և որ նշանաւորն է այստեղ՝ շարժման պարագլուխները իրենց բոլոր ուշքը կենուրօնացը ել են վարժուհիներ պատրաստող կրթարանների վերայ: Կոցա ցանկութիւնն է այնպիսի հաստատութիւններ ունենալ, որ սոցանից ելած դաստիարակչուհիները ջերմեռանդ կաթոլիկ սերունդ պատրաստեն:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

Գերմանիա.

ԳԵԼԻԹ. 30—յունուար 12 ին Բերլինի մեծագոյն դահլիճներից մէկում գերմանական կայսեր, կայսրուհու, նոցա շքախմբի պետական կանցլէրի, ուղիշ նախարարների և բարձրաստիճան ու գիտնական անձանց ներկայութեամբ պրոֆ. Ֆրիդրիխ Գելիչ, Ասորեստանի և Բարելոնի գրականութեան և պատմութեան ամենագլխուն ներկայացուցիչներից մէկը գտափառութիւն կարգաց «Բարելոն և Ս. Գիրք» (Babel und Bibel) վերնագրի ներքոյ, որ նոյն նիւթի մասին անցեալ տարի իւր կարդացածի շարունակութիւնը պէտք է լինէր և առանձին տպաւորութիւն է թողել թէ կայսեր և թէ միւս ունինդիրների վերայ: Գելիչ աշխատում է ապացուցանել, որ ո՞չ միայն Ծննդոց գրքի մի շարք պատմութիւններն ու յիշատակութիւնները, այլ և Մովսիսական օրէնքի բազմաթիւ կէտեր և գաղափարներ փոխ են առնուած Բարելոնից և գրեթէ Խորայէլի ամբողջ անցեալն իւր գրականութեամբ մի աղօտ արտացոլումն է միայն Բարելոնի ծաղկեալ քաղաքակրթութեան: Ժամանակակից հասարակութիւնը այսպիսի խնդիրների բոլորովին անձանօթ լինելով՝ կարծում է թէ նա նոր յայտնութիւններ է անում, մի ամբողջ մութ աշխարհ բաց անում մեր աչքի առաջ, և քանի որ մանաւանդ այդ համարձակ տեսութիւնները ամենաբարձր շրջանի մէջ են յայտնուած՝ ընականաբար հեռու մօտիկ շատերի մտքերը յուղել են և բաւական մեծ իրարանցում յառաջ բերել: Սակայն Գելիչի տեսութիւնների այն կէտերը, որոնք ճշմարտանման են, վաղուց յայտնի էին Հին կտակարանով և մօտոյ զբաղուսդներին, իսկ միւսները դեռ շատ ջար կիերցնեն: Զանազան կողմից անուանի